

կոչումէ. «Վոյժ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղիդ յորում կաս զու ի դմա՝ երկիր սուրբ է»:

Ուսման այս տաճարի գերերջանիկ հիմնադիրն ընդունակ էր ըմբռնելու լուսաւոր ուսման էութիւնը. նա ոչինչ չխնայեց կանգնելու լուսոյ այս վեհ ամբարտակը. նա խղճով էր գործում իւր ազգի առաջ և ահա համարձակապէս դրաւ իբրև յաւիտենական յուշարար ձեմարանի ճակատին ձեմարանի նշանաբանը խոր քանդակուած մարմարեայ քարի մէջ՝ Մեսրոպեան այբուբէն և աւետարանների սկզբնատառերը. դպրութիւն և աւետարանի լոյս Հայաստանեայց եկեղեցու ս. գաւթում: այս է ձեմարանի հիմքն ու կատարը:

Ի՞նչ կայ աւելի գեղեցիկ ձեմարանը վարողի համար, քան ձգտել դէպի այգ իգէտն և ջանալ խոյս տալ յիշածս վտանգներից: Այսօր իբրև ձեմարանի պաշտօնեայ աչք դարձնելով առ Սրբազան Տեղակալը՝ Վանքի Միաբանութիւնն, Սրբազան Տեսուչն ու ձեմարանի ուսուցող և ուսանող մարմինն, որոնց բոլորի աչքերը յառած են առ ազգի մեծ դիտապետը, չեմ կարող չհրաւիրել՝ ինձ հետ միաձայն խոստովանելու ըստ օրինակին քաղաքակիրթ աշխարհի աւետարանի մի խօսքն որ նշանաբան է ուսումնարանի՝ «Տուք և տացի ձեզ», ընդ նմին և կոչել առ իւրաքանչիւր ոք՝ որ ձեմարանի գաւթում ոտք է դնում. «Վոյժ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղիդ յորում կաս զու ի դմա՝ երկիր սուրբ է»:



Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ո

Համառօտապէս կազմեալ վասն մտից և ծախուց Ս. Փրկի չ Եկեղեցւոյ Ախալցխայի յընթացս 1891 ամի:

Մ Ո Ւ Տ Ք.

				Ռ.	Կ.
Մայր գումար մնացեալ 1891 ամի	.	.	.	—	—
Տոկոսք մայր գումարի	—	—
Վարձ եկեղեցական կալուածոց	.	.	.	1121	16

	Ռ․	Կ․
Ի վաճառման է ամբողջ մոմնց	2027	73
Արդիւնք վաճառեալ կիսայրեալ սպիտակ և գեղին մոմնց	—	—
Գանձանակ ժողովեալ յանուն եկեղեցւոյ	114	11
Լուսագինք մկրտութեանց և ստակաց վարձ ջահից և թագից	61	22
Վարձ դիազարդի և դագաղասեղանոյ	—	—
Խաչահանէք և վարագոյր բացէք	13	—
Խաչահամբոյր սրբոց մասանց	2	41
Նուիրադրամք յանուն եկեղեցւոյ	17	64
Ի վաճառման է մորթոց մատաղաց	—	—
Պատահական եկամուտներ, այսինքն հին կտոր վայտերի ծախելից, կտոր թռքմաներ Աղբիւրի խողովակներ, օպուռչներ և այլն	17	6
ընդամենը	3374	33

Ծ Ա Խ Ք․

Գին վաճառելի ամբողջ սպիտակ և գեղին մեղրամոմնց	708	58
Գին կիսայրեալ սպիտակ մոմնց գործագրելոց ի պէտս լուսաւորութեան	—	—
Ռոճիկ լուսարարի	140	—
Ռոճիկ ժամակոչի	94	—
Ռոճիկ եկեղեցական սպասաւորաց (գսպրաց)	654	—
Նպաստ ծխական ուսումնարանին	90	—
Մանր ծախք վասն ածխոյ, ջրոյ և այլն	88	72
Տնահարկ վճարեալ քաղաքային վարչութեան վասն եկեղեցական կալուածոց և ընկերութեան (վասն ապահով պահելոյ նոյն կալուածոց ի հրդեհէ)	98	76
Գին իւղաբերից կիրոնաց	—	—
Վասն նորոգ գնեալ եկեղեցական իրեղինաց	168	72

	Ռ․	Կ․
Վասն լուսաւորութեան գործադրեալ ամբողջ մոմ	—	—
Մախը արարեալ հրամանաւ թեմական իշխանութեան	—	—
Ռոճիկ գիշերապահի	94	—
Վասն նորոգութեան և կարկատանաց եկեղեցւոյն .	1131	82
Պատահական ծախսեր եղեալ ի ժամանակի նախկին երեցփոխան Եազանեանցի	26	—
Տասանորդ ժամահարի ծախսած մոմերուն	79	47
	<hr/>	
Ընդամենը	3374	7

Ծանփոթիւն: 1. Մուտք 1891 ամի եղեալ է 3374 ռուբլի 33 կոպ. և ծախք 3374 ռուբլի 7. կոպ. ծախսը հանելով մուտքից, կըմնայ առ 1Ն յունվարի 1892 ամի ընդ ամենը քսանև վեց կոպ:

2. Անվառ մնացած ամբողջ մոմ սպիտակ տասնևչորս փութ տասնևինն ֆունտ երեսուն և եօթը զալաթնիկ, իսկ դեղին մոմ մի ֆունտ կիսայրեալ մնացած մոմը, հինգ փութ երեսուն ֆունտ վաթսուն և ինն զալաթնիկ:

Երեցփոխան, Կօլէժսկի Սովէթնիկ՝

ՏԻԳՐԱՆ ՏԵՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆՑ.